ՍԻՆՈՅԿԻՍՄՈՍԸ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս. Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո Առաջավոր Արևելքի երկրներում ստեղծված հելլենիստական միապետություններում աննախընթաց թափ է ստանում քաղաքաշինությունը։ Նոր քաղաքներ հիմնադրելու հարցը հելլենիստական թագավորների առաջ դնում էր դժվարին մի խնդիր՝ այդ քաղաքները ապահովել անհրաժեշտ բնակչությամբ։ Այս խնդիրը նրանք լուծում էին գլխավորապես վերաբնակեցման՝ սինոյկիսմոսի (συνοικισμός) միջոցով, որը հելլենիստական ժամանակաշրջանի ամենահետաքրքրական երևույթներից մեկն է։ Սինոյկիսմոսը (բառացի նշանակում է համատեղ բնակվել) հելլենիստական շրջանում առաջացած նոր երևույթ չէր։ Այն հայտնի է եղել հույներին դեռևս շատ հին ժամանակներում։ Այսպես, աթենացիները հավաստիացնում են, թե դասական Հունաստանի խոշորագույն կենտրոնը՝ Աթենքը, առաջացել է մի քանի փոքր համայնքները մի մեծ համայնքի մեջ կամավոր ակզբունքներով միավորելու միջոցով։ Այս սինոյկիսմոսը տեղի է ունեցել առանց կենտրոնական իշխանության միջամտության, տարերայնորեն, բնական միաձուլման հետևանքով։ Աթենքի պարագան բացառություն չէր։ Ստրաբոնը, օրինակ, վկայում է, որ ուրիշ բնակավայրեր ևս առաջացել են տարերային սինոյկիսմոսի ճանապարհով։ «Պելոպոնեսի համարյա բոլոր մյուս վայրերը,— գրում է նա,—բացի մի քանիսից, որ պոետը (Հոմերոսը—Ս. Կ.) համարում է ոչ թե քաղաքներ, այլ բնակավայրեր (χώρα), կազմվել են բազմաթիվ դեմոսներից, որոնցից հետագայում սինոյկիսմոսի միջոցով առաջացան հայտնի քաղաքներ։ Այսպես, օրինակ, Մանտինեան Արկադիայում կազմվել է Արգոսյան հինգ դեմոսների սինոյկիսմոսից, իսկ Տեգեան՝ ինն...»[1]։

Սինոյկիսմոսը տարածված երևույթ էր հատկապես հելլենիստական ժամանակաշրջանում։ Բայց այն որակապես տարբերվում էր մինչհելլենիստական, դասական շրջանի համապատասխան երևույթից։ Եթե նախկինում սինոյկիսմոսը տեղի էր ունենում տարերայնորեն, ապա հելլենիզմի շրջանում այն լայնորեն կիրառում էին իրենք միապետները։ Նրանք նախընտրում էին իրենց տիրապետության տակ ունենալ մի քանի խոշոր քաղաքներ, քան թե մեծ թվով փոքրեր. քաղաքներ, որոնք ոչ միայն սոցիալ-տնտեսական, ռազմական ու քաղաքական հենարան լինեին իրենց համար, այլև նպաստեին իրականացնելու տնտեսական վերահսկողությունը ագրարային լայնարձակ այն տերիտորիայի (χώρα) վրա, որի վարչական կենտրոնը հանդիսանում էր տվյալ քաղաքը։

[1] Strabo, Geographica, recogn. A. Meineke, vol. I—III, Lipsiae, 1915—1925, VIII, 3, 2 (C. 336—337)։ *Հմմտ. նաև* Strabo, VIII, 3, 15 (C. 344)։

Սինոյկիսմոսի, այն է՝ վերաբնակեցումով փոքր քաղաքներից մի մեծ քաղաք հիմնելու միջոցով թագավորները հետապնդում էին հիմնականում տնտեսական նպատակներ։ Փոքր քաղաքները իրենց սահմանափակ նյութական միջոցներով և ոչ մեծ թվով ազգաբնակչությամբ տառապում էին խրոնիկական տնտեսական ու ֆինանսական ճգնաժամով և ամրողջությամբ վերցրած ի վիճակի չէին թագավորների համար ապահովելու կայուն տնտեսական բազա[2]։ Հելլենիստական ժամանակաշրջանում տեղի ունեցած քաղաքների միաձուլման բազմաթիվ դեպքերից մենք կսահմանափակվենք սոսկ մի քանիսի՝ ամենաբնորոշների քննությամբ, որոնցում ավելի հստակ կերպով է բացահայտվում սինոյկիսմոսի պրոցեսն ու նպատակը։

Բնակչության բռնի և զանգվածային զաղթեցման ու նոր քաղաքում վերաբնակեցման միջոցով կատարվող սինոյկիսմոսը կիրառվում էր դեռևս Ալեքսանդր Մակեդոնացու կենդանության ժամանակ։ Արևելքում Ալեքսանդր Մակեդոնացին և նրա հետնորդները սինոյկիսմոսը, բնակչության զանգվածային տեղափոխումը կիրառում էին արևելյան ժողովուրդներին և հունամակեդոնական գաղութարարներին միաձուլելու, երկրում ὁμόνοια —համամտություն, համերաշխություն ձևոք բերելու, «կյանքն ու բարքերը, կենցաղն ու ամուսնությունը միախառնելու» նպատակով։

Հելլենիստական ժամանակաշրջանի ամենավաղ սինոյկիսմոսներից մեկը, որ անց էր կացնում, բայց չկարողացավ մինչև վերջ հասցնել Անտիգոնոսը, հանդիսանում է փոքրասիական երկու ոչ մեծ քաղաքների՝ Տեոսի և Լեբեդոսի սինոյկիսմոսը։ Այդ մասին հանդամանալից վկայություններ են պահպանվել Փոքր Ասիայում հայտնաբերված երկու արձանագրություններում։ Դրանք թագավոր Անտիգոնոս Միականու երկու նամակ-հրամաններն են՝ ուղղված Տեոս քաղաքին։

Անտիգոնոսի հրահանգ-նամակներից առաջինը վերաբերում է այդ սինոյկիսմոսի հետ կապված հետևյալ հարցերին՝ 1. Լեբեդոսի բնակիչների տեղափոխումը Տեոս, 2. փոխադրվողների ապահովումը բնակարանով ու հողակտորով. 3. պարտքերի մարում. 4. հացահատիկի վաճառք վերաբնակիչներին. 5. քաղաքացիական իրավունքի, այն է՝ նոր քաղաքի կոնստիտուցիայի հարց։ Երկրորդ հրահանգ-նամակը վերաբերում է սինոյկիսմոսի կիրառման ընթացքում ձեռնարկվելիք ֆինանսական և կազմակերպչական միջոցառումներին։ Վերոհիշյալ հրահանգների տվյալներով այդ սինոյկիսմոսը ներկայանում է ոչ որպես Անտիգոնոսի պատահական քմահաճույքը, այլ հանդիսանում էր պլանավորված միջոցառում, որը պետք է կենսագործվեր երեք տարվա ընթացքում (ἐν ἐτεσιν τρισιν)[5]։

Ստրաբոնը խոսելով նույն Անտիգոնոսի ձեռնարկած մի ուրիշ սինոյկիսմոսի մասին վկայում է, թե մշտական թշնամություն և պատերազմ կար փոքրասիական երկու հարևան քաղաքների՝ Կերբենեի և Սկեպսիսի բնակիչների միջև։ Անտիգոնոսը փորձեց լուծել այդ վեճը, բայց չուրովի։ Նա տեղափոխեց

---

[1] M. I. Rostovtzeff, The Social and Economic History of the Hellenistic World (այսուհետև կրճատ՝ SEHHW), Oxford, 1941, էջ 155։

[2] Diodor, Bibliotheca Historica, vol. I—V, Lipsiae, 1866—1868, XVIII, 4, 4.

[3] Plutarchus, De Fortuna Alexandri Magni, I, 6.

[5] C. B. Welles, Roval Correspondence in the Hellenistic Period, New Haven, 1934, 3, 15.

(συνοικισεν) այդ երկու քաղաքների բնակիչներին իր նոր հիմնադրած Անտիգոնեա քաղաքը[6]։ Իպսոսի մոտ 301 թ. նրա կրած պարտությունից հետո, հաղթանակ տարած կոալիցիայի անդամներից Լիսիմաքոսը վերանվանեց այդ քաղաքը Ալեքսանդրիա Տրոյայում։ Ստրաբոնի օրոք այդ քաղաքը դեռևս գոյություն ուներ և կոչվում էր նույնպես Ալեքսանդրիա։ Այնտեղ հիմնականում մնացել էին ուրիշների հետ միասին նաև Կերրոնեի նախկին բնակիչները (Κεβρηνιεας συμμειναι τοις αλλοις)։ Թե ում է նկատի ունեցել Ստրաբոնը «τοις αλλοις» —ուրիշների—արտահայտությամբ, երևում է Ստրաբոնի մի ուրիշ հաղորդումից։ Դրանք մոտակայքում գտնված քաղաքների նախկին բնակիչներն էին։ «Այդ փոքր քաղաքները (Ստրաբոնը թվում է վեց πολισματα — Ս. Կ.), ինչպես նաև ամրացված մյուս վայրերից (χωρια) շատերը միաձուլվեցին Ալեքսանդրիային։ Դրանց թվում են Կերրոնեն և Նեանդրիան։ Ալեքսանդրիացիները տիրապետում են նաև այդ քաղաքների հողերը»[7]։ Ինչ վերաբերում է Սկեպսիս քաղաքից վերաբնակեցվածներին, ապա Ստրաբոնը հաղորդում է, որ նրանք շուտով, Լիսիմաքոսի թույլտվությամբ, վերադարձան իրենց քաղաքը։ Այս կապակցությամբ պրոֆ. Ա. Բ. Ռանովիչը իրավացիորեն նշում է, թե «սինոյկիսմոսը չէր նշանակում նոր կենտրոն տեղափոխված բնակավայրերի ֆիզիկական ոչնչացում. դրանք սոսկ դեգրադացիա էին ապրում, կորցնելով իրենց քաղաքական ինքնուրույնությունը, և երբեմն վերածվում էին գյուղական վայրերի (χωραι)»[8]։ Սինոյկիսմոսը վերջ չդրեց նաև Սկեպսիսի գոյությանը որպես ինքնուրույն քաղաքի. հետագա դարերում մի շարք քաղաքական և մշակութային գործիչներ հիշատակվում են իբրև Սկեպսիս քաղաքի բնիկներ, ինչպես, օրինակ, Տիգրան Բ-ի պատմության հեղինակ Մետրոդորոս Սկեպսացին։

Ստրաբոնի հաղորդման մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում նրա խոսքերն այն մասին, թե ալեքսանդրիացիները տիրում են հիշյալ քաղաքներից տեղափոխված բնակիչների հողերը։ Պետք է ենթադրել, որ յուրաքանչյուր վերաբնակվողի, որը նախապես իր քաղաքում տիրում էր որոշակի հողակտորի, հնարավորություն էր տրվում հետագայում ևս իր ձեռքում պահել այն։ Վերաբնակվելուց հրաժարվելու դեպքում այդ հողակտորը բռնագրավվում էր թագավորի կողմից։ Նման միջոցառումը ոմանց ստիպում, մյուսներին խթանում էր վերաբնակվելու նոր քաղաքում։

Հելլենիստական թագավորները միշտ չէ, որ բռնություն էին գործադրում սինոյկիսմոսի կենսագործման և նոր քաղաքների բնակեցման ժամանակ։ Նրանք երբեմն ձգտում էին նյութական շահագրգռվածության միջոցով ապահովել բնակիչների համակրանքը, որպեսզի նրանցով բնակեցնեն այս կամ այն քաղաքը։ Այդպես է վարվել, օրինակ, Անտիոքոս Գ-ն Լիսիմաքիա քաղաքի վերականգնման ժամանակ։ «Նավելով Եվրոպա անցնելիս,—գրում է Ապպիանոսը,—նա (Անտիոքոս Գ-ն —Ս. Կ.) շարժվեց Թրակիայի վրա և ուժով հպատակեցրեց իրեն ենթարկվել չուզող ցեղերին։ Նա ամրացրեց Խերսոնեսը և բնակչությամբ լցրեց Լիսիմաքիան, որ հիմնել էր Լիսիմաքոսը... որպեսզի այն իր համար հանդիսանար ամրացված կետ թրակիացիների դեմ։ Իսկ թրակիացիները, երբ Լիսիմաքոսը մեռավ, կործանեցին այն։ Եվ ահա Անտիոքոսը

[6] Strabo, XIII, 1, 33 (C. 597).
[7] Նույն տեղում, 47 (C. 604).
[8] А. Б. Ранович, Эллинизм и его историческая роль, М.—Л., 1950, էջ 99։

սկսեց բնակչությամբ լցնել այն, Լիսիմաքոսի տիրույթներն ապաստանած փախստականներին ետ կանչելով, ստրկացված գերիներին ետ գնելով, նրանց թվին ուրիշներն ավելացնելով, նրանց եզներ, ոչխարներ և երկրագործության համար երկաթյա գործիքներ տալով և ոչինչ աչքաթող չանելով, որպեսզի արագ կերպով կարողանար ամրացնել քաղաքը»։

Իր աշխատության մեջ Ստրաբոնը պատմում է վաղ հելլենիստական ժամանակաշրջանում տեղի ունեցած մեկ այլ սինոյկիսմոսի մասին, որը անց էր կացրել ոչ թե հույն կամ մակեդոնացի տիրակալը, այլ պարսկական արքունիքի շառավիղներից մեկը՝ Դարեհ Գոդոմանի եղբոր աղջիկ Ամաստրիսը Պաֆլագոնիայում, Պոնտական Հերակլեա քաղաքի մոտ։ Այստեղ հետաքրքիրն այն է, որ Ամաստրիս նոր քաղաքը կազմվում էր ոչ թե քաղաքները, այլ գյուղական բնակավայրերը մի քաղաքային համայնքի մեջ միաձուլելու միջոցով (ἐκ τεττάρων κατοικιῶν)[9]։ Եթե քաղաքների միաձուլման ընթացքում տեղափոխվող բնակիչները հնարավոր է որ դժգոհած լինեին, ապա Ամաստրիսի ձեռնարկած սինոյկիսմոսի դեպքում գործը համեմատաբար հեշտ է գլուխ եկել, քանի որ նոր քաղաք կազմող գյուղական բնակավայրերը, քաղաք դառնալուց հետո, ստանում էին քաղաքային ինքնավարության ստատուտ։ Դրանով իսկ նախկին գյուղավայրերի բնակիչները (κατοικοι) վեր էին ածվում քաղաքացիների և օգտվում այն նույն արտոնություններից, ինչ ուրիշ քաղաքների քաղաքացիները։ Հետևաբար, բնակիչներն իրենք անմիջականորեն շահագրգռված էին նպաստելու այդ սինոյկիսմոսի կենսագործմանը։

Բերված օրինակներից պարզ է դառնում, որ սինոյկիսմոսը հանդիսանում էր հելլենիստական թագավորների քաղաքաշինական գործունեության գլխավոր օղակներից մեկը։

Հայաստանում ևս նոր քաղաքներ կառուցելը հայ թագավորներին կանգնեցնում էր անհետաձգելի մի խնդրի՝ այդ քաղաքները անհրաժեշտ բնակչությամբ ապահովելու խնդրի լուծման առաջ։ Պատմական հանգամանքների բերումով նրանք երկու կարգի հնարավորություն ունեին այդ խնդիրը լուծելու համար՝ 1. հարևան (երբեմն նույնիսկ հեռավոր) երկրներ արշավելով՝ այնտեղից բնակիչներին բռնի կերպով տեղափոխել Հայաստան և բնակեցնել նորակառույց քաղաքում. 2. երկրի ներսում բնակիչներին նախկին բնակավայրերից տեղափոխել ֆնակության նոր վայրեր։

Եթե քաղաքները բնակչությամբ ապահովելու վերոհիշյալ եղանակներից առաջինը բնորոշ էր հայկական թագավորության սկզբնական շրջանի համար (Երվանդունիներ և Արտաշեսյաններ), ապա երկրորդ եղանակը հատկանշական էր Արշաուսյաց թագավորության ժամանակաշրջանի համար։ Եվ դա ուներ իր օբյեկտիվ պատճառները։ Արտաշեսյանների ժամանակ Հայաստանի տիրակալների համար արտաքին նվաճումների միջոցով իրենց տերության սահմանները ընդարձակելու միջազգային բարենպաստ պայմաններ ստեղծվեցին։ Հռոմը ծանրագույն հարված հասցնելով Սելևկյան տերությանը, նրան համարյա զուրս էր մղել Փոքր Ասիայից, իսկ ինքը՝ Հռոմը, դեռևս հնարավորություն չուներ հաստատուն ոտքերով կանգնելու այն երկրներում, որտեղից զուրս էին մղվել Սելևկյանները։ Դրանով իսկ Մերձավոր Արևելքի մի շարք երկրների տիրակալների համար հնարավորություն էր ստեղծվել փորձեր անե-

[9] Strabo, XII, 3, 10 (C. 544).

լու իրենց տիրույթներն ընդարձակելու ուղղությամբ։ Ահա այդ շրջանում էր, որ Արտաշեսյանները (Արտաշես, Տիգրան Բ, մասամբ Արտավազդ Բ), օգտվելով հարմար առիթից, արշավանքներ են ձեռնարկում հարևան երկրներ և, բնակիչներին գերեվարելով, բնակեցնում Հայաստանի նորակառույց քաղաքներում։ Հետագայում հայ Արշակունիները, սեղմված լինելով մի կողմից իր հզորության գագաթնակետին հասած Հռոմի և մյուս կողմից օր-օրի բարձրացող Պարթևական (հետագայում՝ Սասանյան) պետության միջև, ամբողջովին հրաժարվեցին արտաքին նվաճումներից և նոր քաղաքներ կառուցելիս ստիպված էին արդեն շարժման մեջ դնել երկրի ներքին հնարավորությունները։ Դրանով էլ մեծապես կարելի է բացատրել այն հանգամանքը, որ Արշակունիները առանձնապես չփայլեցին որպես քաղաքաշինարարներ։ Այնուամենայնիվ, ինչպես ցույց կտրվի ստորև, Հայաստանում նորակառույց քաղաքները ազգարնակչությամբ ապահովելու վերոհիշյալ երկու եղանակներն էլ չէին տարբերվում հելլենիստական Արևելքի մյուս երկրներում նոր քաղաքներ կառուցելիս թագավորների ձեռնարկած սինոյկիսմոսից։

Ուրիշ վայրերից մարդկանց նոր քաղաքներ փոխադրելը Հայաստանում կիրառվել է դեռևս առաջին Արտաշեսյանների ժամանակ, հայկական պետականության կազմավորման առաջին իսկ շրջանում։ Ստրաբոնը նշում է, որ Արտաշեսը, իրեն Մեծ Հայքի թագավոր հռչակելուց հետո, հարևան մի շարք գավառներ միացնելով իր երկրին, ընդարձակեց իր տերության սահմանները։ Նորաստեղծ թագավորության համար անհրաժեշտ էր նորակառույց մայրաքաղաք։ Ուստի Արտաշեսը, հետևելով Փոքր Ասիայի հելլենիստական թագավորների օրինակին, կառուցում է Արտաշատը։ Այս միջոցառումը կբարձրացներ Հայաստանի թագավորի հեղինակությունը միջազգային ասպարեզում, միաժամանակ նորաստեղծ քաղաքը կդառնար վարչա-տնտեսական ամուր հենարան երկրի ներսում։ Կարծում ենք, թե չի սխալվել Հրանտ Արմենը գրելով. «Արքայական վարկին ամրապնդման մտահոգությունը հավանաբար գլխավոր դրդապատճառը պետք էր եղած ըլլար քաղաք մը շինելու գաղափարին։ Մեծագույն քաղաքը Հայաստանի, ուր արքունիքը հաստատվի, և որը, որպես մայրաքաղաք, երկրի ամեն կողմերեն հոծ բազմություններ հրապուրե։ Այսպիսի կեդրոնի մը ստվար բնակչությունը անտարակույս հավատարիմ պիտի ըլլար թագավորին և զորավիգ դառնար անոր իշխանության»[10]։ Հայաստանի այս հնագույն մայրաքաղաքի կառուցման մասին մեր հիմնական աղբյուրները երեքն են՝ Ստրաբոն, Պլուտարքոս և Խորենացի։ Նրանք բոլորն էլ համամիտ են այն բանում, որ քաղաքը կառուցվել էր մինչ այդ անբնակ վայրում[11]։ Հետաքրքրական է, որ Ստրաբոնը քաղաքի բնակեցման մասին խոսելիս օգտագործում է συνῳκισμένη καλως —«լավ բնակեցված» արտահայտությունը։ Բացառված չէ, որ Արտաշեսն այնտեղ բնակեցրած լինի իր թագավորությանը միացրած նոր երկրների բնակիչների մի մասին։ Պլուտարքոսը ոչինչ չի ասում այն մասին, թե Արտաշեսն ինչպես բնակեցրեց իր նոր մայրաքաղաքը։ Բայց Մ. Խորենացին ունի մի շարք հետաքրքիր վկայություններ,

---

10 Հրանտ Արմեն, Մեծն Տիգրան, Կահիրե, 1957, էջ 20։

11 Strabo, XI, 14, 5–6; Plutarchus, Lucullus, XXX. Vitae Parallelae, t. I, Lipsiae, 1914. «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, գիրք Բ գլուխ ԽԹ։

որոնց հիման վրա կարելի է որոշ եզրակացություններ հանդել։ Ըստ Խորենացու, քաղաքը կառուցելուց հետո Արտաշեսը «կանգնէ ի նմա մեհեան և փոխէ ի Բազարանէ զպատկերն Արտեմիդայ և զամենայն կուռս հայրենիս»[12]։ Նշանակում է՝ այնտեղ բնակվեցին առաջին հերթին քրմերն ու տաճարների սպասավորները[13]։ Շարունակելով՝ պատմահայրը հաղորդում է, որ Արտաշեսը «յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն հրէից, որ փոխեալ էին անդ յԱրմաւրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ»[14]։ Անախրոնիզմն այստեղ ակներև է։ Հրեաներին Հայաստան է բերել Տիգրան Բ-ն Երվանդ վերջինից և Արտաշեսից հետո, այսինքն՝ Երվանդաշատի և Արտաշատի կառուցումից հետո։ Հետևաբար, հնարավոր է երկու ենթադրություն. կամ Արտաշատ փոխադրվածները հրեաներ չէին, կամ էլ նրանք փոխադրվել են ավելի ուշ, ասենք, Կորբուլոնի կողմից քաղաքն ավերվելուց հետո, Տրդատ Ա-ի կողմից վերակառուցվելու կապակցությամբ։ Այս վերջին ենթադրությունը մեզ ավելի հավանական է թվում, քանի որ մեծ թվով հրեաների գոյությունը Արտաշատում անժխտելի փաստ է[15]։ Տվյալ դեպքում մեզ համար կարևոր է ոչ թե բնակիչների էթնիկական կազմը որոշելը, այլ նրանց տեղափոխման փաստը ինքնին, որին զուգահեռ օրինակները մենք նշել ենք վերևում, հելլենիստական Փոքր Ասիայում տեղի ունեցող սինոյկիսմոսների մասին խոսելիս։ Ինչպես Փոքր Ասիայի հելլենիստական երկրներում տեղի ունեցած սինոյկիսմոսների ժամանակ վերաբնակվողները թագավորից ստանում էին որոշակի առանձնաշնորհումներ, այդպես էլ, հավանական է, Արտաշատում վերաբնակվողներին Արտաշեսը շնորհում էր զանազան արտոնություններ, նրանց դեպի նոր կառուցվող քաղաքը հրապուրելու համար։ Այս ենթադրության օգտին խոսում են մատենագրական մի շարք կողմնակի վկայություններ։ Մ. Խորենացին, օրինակ, վկայում է, որ Արտաշատը արագ կառուցվեց և այդ վերագրում է այն բանին, որ «ձեռնտու լինի նմա (Արտաշեսին—Ս. Կ.) և Երասխ փայտիւր մայրից. վասն որոյ անաշխատ և երագ շինեալ...»[16]։ Բացառված չէ, որ քաղաքի արագ կառուցման հիմնական խթանը հանդիսանային վերաբնակվողներին թագավորի շնորհած արտոնությունները, ասենք՝ վարելահող տրամադրելը, հարկերից ազատելը և այլն։ Ինչ վերաբերում է Խորենացու հաղորդման վերջին մասին, ապա պիտի ենթադրել, որ թագավորը, որի սեփականությունն էին անտառները, թույլ էր տվել վերաբնակվողներին նոր շենքերի և բնակարանների կառուցման ժամանակ անսրդել օգտվել անտառանյութից, որը փոխադրվում էր Արաքսի վրայով։

Քանի դեռ Արտաշեսյանների թագավորությունը պարփակված էր Մեծ Հայքի բնական սահմանների մեջ, Արտաշատը մնում էր որպես երկրի միակ

---

12 Մովսես Խորենացի, Բ, ԽԹ։

13 Խորենացու այս վկայությանը հետաքրքիր մեկնաբանություն է տալիս Հրանտ Արմենը։ «Հայ աստվածները Արտաշատ հաստատելով,—գրում է նա,—ինչպես նաև անոնց ի պատիվ պաշտամունքի տոնական օրեր նշանակելով, թագավորը վստահ էր, որ Հայաստանի ամեն կողմերեն ուխտավորներ, առևտրականներ, մարգիկներ, արկածախնդիրներ և բախտ ու ոսկի որոնողներ պիտի գային իր քաղաքը և շատ շատեր հոն հաստատեին իրենց բնակությունը» (Հրանտ Արմեն, Մեծն Տիգրան, Կահիրե, 1957, էջ 22)։

14 Մովսես Խորենացի, Բ, ԽԹ։

15 Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1889, Դ, ԺԵ։

16 Մովսես Խորենացի, Բ, ԽԹ։

վարչա-տնտեսական և քաղաքական կենտրոն և կարիք չէր զգացվում մի երկրորդ, զուգահեռ կենտրոն ստեղծելու։ Տիգրան Բ-ի նվաճումների հետևանքով հայկական թագավորությունը դուրս եկավ իր բնական աշխարհագրական սահմաններից և որոշ ժամանակ հասավ մինչև Կիլիկիա, Միջերկրական ծով և Պաղեստին։ Այդ պայմաններում էլ ահա Տիգրան Բ-ի համար ակներև է դառնում, որ մայրաքաղաք Արտաշատը, մնալով իր նորաստեղծ լայնածավալ պետության հյուսիս-արևելյան ծայրամասում, ի վիճակի չէր այդպիսի ընդարձակ տերության վարչա-տնտեսական կենտրոնին առաջադրվող դերը լրիվ կատարելու։ Իր արշավանքների ընթացքում Տիգրան Բ-ն տիրացավ Արևելքի մեծագույն քաղաքին՝ Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքին։ Քաղաքը նվաճելուց հետո, հայոց արքան կարծես թե այնտեղ էր փոխադրելու իր տերության մայրաքաղաքը։ Բայց այդպես չարեց։ Անտիոքը ևս, Արտաշատի նման, աշխարհագրական տեսակետից չէր գտնվում տերության կենտրոնում։ Այն ուներ մի այլ թերություն ևս, որ չուներ Արտաշատը՝ ամբողջ բնակչությունը օտար էր, ոչ հայ։ Նոր մայրաքաղաքի հարցը լուծելու համար Տիգրան Բ-ի առաջ մնում էր մի ճանապարհ. այն է՝ հարմարագույն վայրում կառուցել մի նոր քաղաք և այն դարձնել իր տերության վարչա-տնտեսական ու մշակութային կենտրոն։ Այդպես էլ նա արեց, քանի որ դրա համար արդեն ուներ անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կառուցող վարպետներ, փող և քաղաքային բնակչություն։ Այս բոլորը Տիգրան Բ-ն արդեն ձեռք էր բերել նախքան քաղաքի կառուցումն սկսելը իր արշավանքների ընթացքում։ Որպես շինարարական գործի վարպետներ Տիգրանն անպայման օգտագործեց նվաճված Կորդուքի բնակիչներին, որոնց մասին Ստրաբոնն ուղղակի վկայում է, որ «համարվում էին լավագույն ճարտարապետներ և պաշարողական գործիքների վարպետ շինողներ։ Ուստի նրանց հենց այդպիսի գործերի համար էլ օգտագործում էր Տիգրանը»[18]։ Փող և այլ միջոցներ նա ձեռք էր բերել ոչ միայն Ասորիք, Կիլիկիա և Պաղեստին կատարած արշավանքների միջոցով, այլ նաև Միհրդատ Եվպատորի հետ համատեղ Կապադովկիայի վրա արշավելու ժամանակ, որի մասին Յուստինոսը հաղորդում է, թե երկու թագավորները «պայմանավորվել էին իրար հետ, որ քաղաքները և հողերը պատկանելու են Միհրդատին, իսկ մարդիկ և ինչ որ հնարավոր է տանել՝ Տիգրանին»[19]։ Ունենալով այս բոլոր միջոցները, Տիգրանը ձեռնամուխ է լինում նոր մայրաքաղաքի կառուցմանը[20]։

Փորձենք պարզել, թե ի՞նչ եղանակով այն կառուցվեց։ Ե՛վ հայկական և՛ օտար սկզբնաղբյուրներում Տիգրանակերտի կառուցման վերաբերյալ պահպանված վկայությունների մանրակրկիտ քննարկումը մեզ բերում է այն եզրակացության, որ այն կառուցվել է նույն եղանակով, ինչ Փոքր Ասիայի հել-

[18] Strabo, XVI, 1, 24.

[19] Justin., XXXVIII, 3, 1—15.

[20] Հ. Աստուրյանը («Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռոմի», Վենետիկ, 1912, էջ 43) նկատում է, որ հունական աղբյուրները Տիգրանակերտը երբեք մայրաքաղաք չեն կոչել. նրանց համար Հայաստանի մայրաքաղաքը միշտ Արտաշատն է։ Դուցե դա այն պատճառով, որ Տիգրանի կայսրությունը կարճատև եղավ, և հայոց թագավորը ժամանակ չունեցավ նորակառույց քաղաքը պաշտոնապես մայրաքաղաք հայտարարելու։ Այսուհանդերձ, Տակիտոսի մոտ Տիգրանակերտը կոչված է մայրաքաղաք, թագավորանիստ (Tacit., Annal., XV, 6)։

լենիստական քաղաքների զգալի մասը, այն է՝ սինոյկիսմոսի, այս ու այն բնակավայրի բնակիչներին բռնի նոր քաղաք տեղափոխելու եղանակով[21]։ Սկսենք նկարագրված դեպքերին ժամանակի տեսակետից ամենամոտ կանգնած Ստրաբոնի վկայություններից։ «...Զորեղանալով այդքան,—գրում է Ստրաբոնը,—նա (Տիգրանը—Ս. Կ.) Օլիբերիայի մոտ քաղաք կառուցեց... որն անվանեց Տիգրանակերտ, քշելով-բերելով այնտեղ մարդիկ իր կողմից ավերված հելլենական տասներկու քաղաքներից»[22]։ Մի ուրիշ տեղ, Կապադովկիայի Մաժաք քաղաքի պատմությունն անելիս, Ստրաբոնը գրում է. «Վատ վերաբերվեց նրանց (մաժաքցիներին—Ս. Կ.) Տիգրան Արմենը, երբ արշավեց Կապադովկիա։ Նա բոլորին տեղափոխեց Միջագետք և Տիգրանակերտը մեծ մասամբ բնակեցրեց (συνῴκισε) նրանցով»[23]։

Մենք հակված ենք ենթադրելու, որ Ստրաբոնը գիտեր Տիգրանի երկու տարբեր արշավանքների մասին։ Դրանցից առաջինը, որի ժամանակ Տիգրանը ավերել էր հելլենիստական տասներկու քաղաքներ, տեղի էր ունեցել նախքան հայ-պոնտական դաշինքի կնքումը և Միհրդատյան պատերազմները[24]։ Տիգրանի երկրորդ արշավանքը Կապադովկիա, որի ժամանակ նա ավերել էր Մաժաքը, անկասկած, տեղի էր ունեցել Միհրդատյան երկրորդ պատերազմի ընթացքում, որի մասին Ապպիանոսը մանրամասն խոսելիս, ի միջի այլոց հաստատում է Ստրաբոնի վկայությունը՝ գրելով. «Իսկ Արմենը (Տիգրանը—Ս. Կ.) գերեվարելով Կապադովկիան, մոտ երեսուն բյուր մարդկանց տեղահանելով բնակեցնում էր (συνῴκιζεν) նրանց ուրիշների հետ այն վայրում, որտեղ առաջին անգամ իր գլխին դրեց Հայաստանի թագը և որը իր անունով կոչեց Տիգրանակերտ...»[25]։

Այս վկայությունները հաստատում է նաև Պլուտարքոսը, նշելով, որ Տիգրանակերտում «ապրում էին շատ հույներ, որոնք բռնի կերպով տեղահանվել էին Կիլիկիայից, ինչպես նաև մեծ թվով բնիկներ՝ ասորիներ, կորդուքներ և կապադովկիացիներ։ Արքան (Տիգրանը—Ս. Կ.) ավերեց նրանց քաղաքները, իսկ բնակչությանը իր հետ բերելով՝ ստիպեց ապրել այստեղ»[26]։ Վերոհիշյալ վկայություններին համերաշխ է նաև Դիոն Կասսիոսի հաղորդած մի տեղեկությունը։ Խոսելով Լուկուլլոսի կողմից Տիգրանակերտի գրավման մասին, նա այդ փաստը կապում է առավելապես այն այլազգիների ապստամբության հետ, որոնք բերվել ու բնակեցվել էին այնտեղ (τῶν ξενῶν τῶν συνοικούντων)[27]։

Առանձնապես հետաքրքիր է անտիկ հեղինակների տերմինաբանությունը՝ Տիգրանակերտի բնակեցման մասին գրելիս։ Այսպես, Ստրաբոնն ու Ապպիանոսը օգտագործում են συνῴκισε (բնակեցրեց սինոյկիսմոսի եղանակով) բայը, իսկ Դիոն Կասսիոսը՝ նույն բայի դերբայական ձևը (συνοικούντων)։

---

21 Այս հանգամանքը մատնանշել է նաև Մ. Ռ. Ռոստովցևը (SEHHW, էջ 856)։

22 Strabo, XI, 14, 15.

23 Նույն տեղում, XII, 2, 9.

24 Հմմտ. Հ. Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը..., էջ 52, նույնի՝ Քննական տեսություն..., հատ. 1, էջ 154։

25 Appian., Historia Romana, Lipsiae, 1879, Mithr., 67.

26 Plut., Lucull., XXVI.

27 Cass. Dio, XXXVI, 2.

Այս փաստը առավել քան պերճախոս կերպով վկայում է այն մասին, որ Տիգրանակերտը հիմնադրվել է և բնակեցվել սինոյկիսմոսի միջոցով, այնպես, ինչպես Փոքր Ասիայի հելլենիստական մի շարք քաղաքներ։

Մեր մատենագիրները խոսում են Տիգրանի նվաճած երկրներից Հայաստան բերված գաղթականների և նրանց բնակեցման մասին, սակայն հազվադեպ են տվյալները փոքրասիական երկրներից Տիգրանի բերած գաղթականության վերաբերյալ։ Միայն Խորենացին մի անգամ հիշատակում է Տիգրանի բերած հունական աստվածների և քրմերի մասին, «որ եկեալ էին ի Յունաց...»[28]։ Շարունակելով, Խորենացին Տիգրանի մասին վկայում է, որ «առեալ գերի բազում և ի Հրէիցն, նստի շուրջ Պտղոմայիդ քաղաքաւ»[29]։ Այնուհետև պատմահայրը ուղղակի խոսում է Հրեաստանից բերված գերիներին Հայաստանի քաղաքներում բնակեցնելու մասին։ «Իսկ թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւն հրէիցն նստուցեալ ի յԱրմաւիր և ի յաւանին Վարդէսի. որ ի վերայ Քասաղ գետոյ...»[30]։ Դարձյալ՝ «Եւ զՀիւրկանոս կապելով ածեն Տիգրանայ հանդերձ գերութեամբն, և Տիգրան հրաման տայ Բարզափրանայ նստուցանել զգերին Հրէից՝ որ ի մարիսացւոց, ի քաղաքն Շամիրամայ»[31]։

Փավստոս Բուզանդը, Սասանյան Շապուհի Հայաստան կատարած ավերիչ արշավանքների պատմությունն անելիս, խոսում է հայկական քաղաքներից գերի տարված մեծ թվով հրեաների մասին և ավելացնում. «Զայս ամենայն բազմութիւն Հրէից, զոր գերեցին տարան յերկիրն Հայոց, ածեալ էր յերկրէն պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին, յորժամ գերեաց նա և ած ի Հայս զքահանայապետն Հրէից զՀիւրկանոս զառաջին ժամանակաւ։ Եւ էած մեծ արքայն Տիգրան զամենայն զհրէութիւնն զայն՝ բնակեցուց ի քաղաքսն Հայոց յիւրում գարուն ի ժամանակին»[32]։

Հունական աղբյուրները խոսում են Տիգրանի կողմից առավելապես հելլենիստական քաղաքների նվաճման ու ավերման մասին, մինչդեռ ազգային մատենագիրները խոսում են բացառապես Պաղեստինից բերված գերիների մասին։ Այդ երկու կարգի աղբյուրներում պահպանված տվյալների համադրումով մենք կարող ենք ստանալ ընդհանուր գծերով այդ դեպքերի ճիշտ պատկերը. Տիգրան Բ-ն գերիներ է բերել Հայաստան և՛ Փոքր Ասիայի հելլենականացած քաղաքներից, և՛ Պաղեստինից ու Ասորիքից։ Կարծում ենք, իրավացի են նրանք, ովքեր գտնում են, թե հունական աղբյուրների վկայությունը այն մասին, որ իբր այդ գաղթականությունը Տիգրանն ամբողջովին բերել ու բնակեցրել է Տիգրանակերտում, չի համապատասխանում իրականությանը և որ ավելի ճիշտ են այս հարցում հայկական աղբյուրները, որոնց համաձայն գաղթականների այդ հսկայական զանգվածը բնակեցվել է Հայաստանի մի շարք քաղաքներում, ինչպիսիք էին Տիգրանակերտը, Արտաշատը, Արմավիրը, Վանը և այլն։

Իր նոր մայրաքաղաքը կառուցելիս ու բնակեցնելիս Տիգրանը հիմնականում դիմելով հելլենական և սեմական տարրերն այնտեղ վերաբնակեցնելու

---

28 Մովսես Խորենացի, Բ, ԺԴ։
29 Նույն տեղում։
30 Նույն տեղում, Բ, ԺԶ։
31 Նույն տեղում, Բ, ԺԹ։
32 Փավստոս Բուզանդ, Դ, ՄԵ։

միջոցին, այնուամենայնիվ, չէր կարող անտեսել Հայաստանի ընձեռած ներքին հնարավորությունները ևս։ Բացառապես օտարներով բնակեցված մի քաղաք չէր կարող հուսալի հենարան հանդիսանալ հայոց թագավորի համար։ Ուստի նա Տիգրանակերտի կառուցման ու բնակեցման գործին մասնակից դարձրեց նաև հայկական տարրերին, ինչպես հասարակ ժողովրդին, ռամիկներին, այնպես էլ վերնախավի ներկայացուցիչներին։ Այդ մասին ավելի քան պարզորոշ վկայում են Պլուտարքոսն ու Ապպիանոսը։ «Այստեղ նա հավաքեց,—գրում է Ապպիանոսը,—իր տերության ամենահայտնի մարդկանց, սպառնալով նրանց, որ այն, ինչ չեն վերցնի իրենց հետ՝ կրոնագրավվի»[33]։ Իսկ Պլուտարքոսը հաղորդում է, որ «ինչպես քաղաքի հասարակ մարդիկ, այնպես էլ մեծամեծները թագավորին հաճոյանալու նպատակով իրար հետ մրցում էին քաղաքի կառուցման և ընդարձակման համար»[34]։ Տիգրանի այս ձեռնարկումն ուներ քաղաքական խոշոր նշանակություն։ Հայերին ևս բնակեցնելով նոր մայրաքաղաքում, իր համար նա ստեղծում էր որոշ հենարան։ Դիոն Կասսիոսը վկայում է. «Պաշարեց (Լուկուլլոսը—Ս. Կ.) Տիգրանակերտը։ Նրան ուժեղ կերպով տանջեցին բարբարոսները (իմա՝ հայերը—Ս. Կ.) և՛ նետաձգությամբ, և՛ պաշարողական մեքենաների վրա նավթ լցնելով»[35]։ Դրան հակառակ, Փոքր Ասիայի հելլենական քաղաքներից բռնի փոխադրվածները վճռական պահին դավաճանեցին ու քաղաքը հանձնեցին Լուկուլլոսին[36]։ Մյուս կողմից, հայ մեծամեծներին ստիպելով հաստատվել Տիգրանակերտում և ապրել իր հետ, Տիգրանը ավելի հեշտությամբ կկարողանար վերահսկել նրանց գործունեությունը և անմիջապես կանխել նրանց կողմից հավանական որևէ ապստամբություն իր դեմ։ Եվ, վերջապես, նա դրանով հնարավորություն էր ստանում հայ մեծամեծների նյութական միջոցները ևս ներդնելու նոր քաղաքի կառուցման գործում։

Հայկական հնագույն քաղաքների առաջացման քաղաքական պատմությունը շարադրելու առիթով մենք արդեն խոսել ենք Հայաստանի պատմության մեջ նկատված մի եզակի դեպքի՝ Արշակավանի կառուցման մասին[37]։ Այժմ, սինոյկիսմոսի հարցը քննելու կապակցությամբ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ Արշակի քաղաքի կառուցումն ու բնակեցումը յուրօրինակ մի սինոյկիսմոս էր։ Փ. Բուզանդի և Մ. Խորենացու մոտ պահպանվել է իր հակառակորդ նախարարներին տնտեսական ու սոցիալական հենարանից զրկելու նպատակով Արշակ թագավորի հրապարակած հրովարտակի բովանդակությունը, որով նոր հիմնվող այդ քաղաքում ապաստանողները ազատվում էին ամեն տեսակ հետապնդումներից։ Ուստի շուտով Արշակավանը դառնում է հալածվածների հավաքատեղին և աճելով վեր է ածվում բազմամարդ քաղաքի։

Արշակավանի հիմնադրման պատմությունը շատ բանով հիշեցնում է մ. թ. ա. II դարի սկզբներին հելլենիստական աշխարհում ծագած սոցիալական խոշոր և ամենահետաքրքիր շարժումներից մեկը՝ կապված Սպարտայի թա-

---

[33] Applan., Mithr., 84.

[34] Plut., Lucull., XXVI.

[35] Cass. Dio, XXXVI, 1.

[36] Նույն տեղում, 2: Applan., Mithr., 86.

[37] С. М. Кркяшарян. Возникновение городов в Армении во II в. до н. э.—III в. н. э.. Научные доклады высшей школы, «Исторические науки», 1961, № 4.

գավոր Նաբիսի անվան հետ։ Դեռևս մ. թ. ա. III դարի կեսերին բնատնտեսության քայքայումը Սպարտայում վերջ էր դրել լակեդեմոնացիների ավանդական հավասարությանը՝ հիմնված հողի հավասար բաժանման և անօտարելիության սկզբունքի վրա։ Քաղաքացիների թիվը նվազելով հասել էր 700-ի, որոնցից միայն 100-ը հողակտոր ունէր։ Երիտասարդ Ագիս թագավորը 243 թ. փորձեց արմատական ռեֆորմ անցկացնել հողերի վերաբաժանման և պարտքերի մարման նշանաբանով։ Բայց 241 թ. նա սպանվեց։ Նրա գործը շարունակեց Կլեոմենեսը (235—222), որի երկարատև պայքարը նույնպես ձախողվեց։ Ի վերջո Նաբիսին հաջողվեց մ. թ. ա. II դարի սկզբներին այդ նույն նշանաբանով անցկացնել հեղափոխիչ միջոցառումներ, իր ետևից տանելով ժողովրդական լայն զանգվածներին։ Նաբիսը Սպարտան հայտարարեց անձեռնմխելի (ἀσύλον) և ապաստան տվեց բոլոր իր մոտ փախչողներին։

Նաբիսի միջոցառումների վերաբերյալ հույն հեղինակների գնահատականները համեմատելով Արշակավանի մասին Բուզանդի և Խորենացու տվյալների հետ, տեսնում ենք, որ և՛ սրանք, և՛ նրանք խիստ բացասաբար են վերաբերվում թագավորների միջոցառումներին։ Ինչ չափով որ Պոլիբիոսը մեղադրում է Նաբիսին բռնապետության մեջ, այնչափով էլ հայ մատենագիրները մեղադրում են Արշակին անհավատության և անիրավության մեջ։ Երկու դեպքում էլ պատմագիրների կողմից տրված միանման ժխտողական գնահատականը, մեր կարծիքով, կարևոր ցուցանիշ է այդ երկու երևույթների համանման բնույթի մասին։

Արտաշատի և Տիգրանակերտի բնակեցման օրինակով մենք փորձեցինք ցույց տալ, որ Հայաստանում անցկացվող սինոյկիսմոսը շատ բանով նման է եղել հելլենական աշխարհում կիրառվող սինոյկիսմոսին։ Այսուհանդերձ դրանց միջև կա մի էական տարբերություն։ Փոքր Ասիայի հելլենականացած երկրներում, որտեղ զարգացած էր քաղաքային կյանքը, սինոյկիսմոսը ուներ տեղական բնույթ և կիրառվում էր տեղական բազայի հիման վրա, մինչդեռ Հայաստանում կիրառվող սինոյկիսմոսն ընդգրկում էր հեռավոր երկրների բնակիչներին։ Դա բացատրվում է նրանով, որ Փոքր Ասիայում զարգացած քաղաքային կյանքը և մեծաքանակ քաղաքային բնակչությունը հնարավորություն էին տալիս հենց տեղում լուծելու նոր քաղաքը բնակեցնելու հարցը, մինչդեռ Հայաստանում դեռևս չկային մեծ քաղաքներ և քաղաքային համապատասխան բնակչություն։ Ուստի հայ թագավորները ստիպված էին այդ բնակչությունը համալրել հեռավոր երկրներից։

Այսպիսով, հելլենիստական աշխարհում սինոյկիսմոսի եղանակով նոր քաղաքների հիմնադրման պատմության ընդհանուր ֆոնի վրա հայկական հնագույն քաղաքների առաջացման վերաբերյալ աղբյուրներում պահպանված տվյալների ուշադիր քննարկումը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ հելլենիստական ամբողջ աշխարհն ընդգրկած քաղաքաշինության հսկայական պրոցեսում ներգրավվել էր նաև Հայաստանը և հայկական քաղաքների առաջացումը հանդիսանում է պատմական այդ խոշոր երևույթի կարևոր օղակներից մեկը։

СИНОЙКИЗМ В ЭЛЛИНИСТИЧЕСКОЙ МАЛОЙ АЗИИ И АРМЕНИИ

С. М. КРКЯШАРЯН

(Резюме)

Эллинистическая эпоха на Востоке ознаменовалась бурным градостроительством. Главным способом основания и заселения новых городов являлся синойкизм (переселение жителей). Если раньше синойкизм возникал стихийно, то в эллинистическое время его проводили сами монархи. При синойкизме обычно сливались два или несколько меньших городов в один большой. Иной раз сливались не города, а поселения и деревни. И, наконец, жители одного места насильно перемещались царем во вновь построенный город. В тех эллинистических странах Малой Азии, где издревле существовала развитая городская жизнь, синойкизм производился на местной базе. В Армении же, где городского населения и так не хватало, армянские цари были вынуждены переселять чужестранцев.

В эллинистической Армении намечаются два вида синойкизма: переселение чужестранцев и переселение жителей внутри страны с одного места на другое. В обоих случаях синойкизма цель была одна, а именно — привлекать население в новый город путем предоставления различных привилегий, причем цари стремились таким путем создавать для себя социально-экономическую опору в борьбе против внешнего врага и для предотвращения внутренних социальных движений.

Изучение синойкизма в Армении еще с одной стороны подтверждает, что Армения тоже была вовлечена в грандиозный процесс эллинистического градостроительства и что возникновение армянских городов того времени является важным звеном этого исторического процесса.